

**Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5–ի 2006/25/ԵՀ
հրահանգ**

**Ֆիզիկական ազդակներից (արհեստական օպտիկական ճառագայթում) առաջացող
վտանգներին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության
նվազագույն պահանջների մասին**

(19-րդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 137(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը [1], որը ներկայացվել է
Աշխատավայրում անվտանգության և առողջության հարցերով խորհրդատվական կոմիտեի
հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [2],

Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի [3] 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան և ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2006 թվականի հունվարի 31-
ին հաստատված համատեղ տեքստից,

Քանի որ

1) Պայմանագրով նախատեսվում է, որ Խորհուրդը, հրահանգների միջոցով, կարող է
ընդունել հատկապես աշխատանքային միջավայրի բարելավումը խթանելուն ուղղված
նվազագույն պահանջներ՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության
պահպանման ավելի բարձր մակարդակ երաշխավորելու նպատակով, Նման
հրահանգներում ձեռնպահ են մնում այնպիսի վարչական, ֆինանսական և իրավական
սահմանափակումներ սահմանելուց, որոնք կխոչընդոտեն փոքր և միջին
ձեռնարկությունների (ՓՄՁ–ներ) ստեղծումն ու զարգացումը,

2) Աշխատողների հիմնարար սոցիալական իրավունքների մասին Համայնքի խարտիայի իրականացմանն ուղղված գործողությունների ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովի հաղորդագրությամբ նախատեսվում է առողջության և անվտանգության նվազագույն պահանջների ներմուծում ֆիզիկական ազդակներից առաջացող վտանգների համար, որոնց ենթարկվում են աշխատողները: 1990 թվականի սեպտեմբերին Եվրոպական պառլամենտն այս գործողությունների ծրագրի վերաբերյալ որոշում է ընդունել (4): Այդ որոշմամբ Եվրոպական պառլամենտը կոչ է արել Հանձնաժողովին, մասնավորապես, մշակել հատուկ հրահանգ այն վտանգների մասին, որոնք առաջանում են աշխատավայրում աղմուկի և թրթռումների ու որևէ այլ ֆիզիկական ազդակի հետևանքով,

3) որպես առաջին քայլ՝ Եվրոպական պառլամենտը և Խորհուրդն ընդունեցին «Ֆիզիկական ազդակներից (թրթռումներ) առաջացող վտանգներին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության նվազագույն պահանջների մասին» 2002 թվականի հունիսի 25-ի 2002/44/ԵՀ հրահանգը (16-րդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով) (5): Այնուհետև, 2003 թվականի փետրվարի 6-ին Եվրոպական պառլամենտը և Խորհուրդն ընդունեցին «Ֆիզիկական ազդակներից (աղմուկ) առաջացող վտանգներին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության նվազագույն պահանջների մասին» 2003/10/ԵՀ հրահանգը (17-րդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով) (6): Վերջապես, 2004 թվականի ապրիլի 29-ին Եվրոպական պառլամենտը և Խորհուրդն ընդունեցին «Ֆիզիկական ազդակներից (էլեկտրամագնիսական դաշտեր) առաջացող վտանգներին ենթարկվող աշխատողների առողջության ու անվտանգության նվազագույն պահանջների մասին» 2004/40/ԵՀ հրահանգը (18-րդ առանձին հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով) (7),

4) ներկայումս անհրաժեշտ է համարվում ներմուծել այնպիսի միջոցներ, որոնք կպաշտպանեն աշխատողներին՝ վերջիններիս առողջությանը և անվտանգությանը հասցվող ազդեցությունների հետևանքով առաջացող օպտիկական ճառագայթման վտանգներից՝ կապված, մասնավորապես, աչքերին ու մաշկին հասցվող վնասի հետ: Այդ միջոցները ոչ միայն նախատեսված են առանձին-առանձին յուրաքանչյուր աշխատողի առողջությունը պահպանելու ու անվտանգությունն ապահովելու, այլ նաև Համայնքի բոլոր աշխատողների համար պաշտպանության նվազագույն հիմք ստեղծելու համար՝ նպատակ ունենալով խուսափելու մրցակցության հնարավոր խաթարումներից,

5) սույն Հրահանգների նպատակներից մեկը օպտիկական ճառագայթման ենթարկվելու պատճառով առողջության վրա գործող բացասական հետևանքները ժամանակին բացահայտելն է,

6) սույն Հրահանգով սահմանվում են նվազագույն պահանջներ՝ դրանով իսկ հնարավորություն տալով անդամ պետություններին պահպանելու կամ ընդունելու առավել խիստ դրույթներ՝ աշխատողներին պաշտպանելու, մասնավորապես, ճառագայթահարման ավելի ցածր մակարդակ սահմանելու համար: Սույն Հրահանգի կիրարկումը չպետք է ծառայի որպես այնպիսի իրավիճակի վատթարացման հիմնավորում, որն արդեն առկա է յուրաքանչյուր անդամ պետությունում,

7) օպտիկական ճառագայթման վնասներից պաշտպանության համակարգը պետք է սահմանափակվի նման ազդեցությունների սահմանամբ, պետք է ավելորդ մանրամասներից զուրկ լինի, պետք է ներառի այնպիսի նպատակներ, որոնց անհրաժեշտ է հասնել, այնպիսի սկզբունքներ, որոնց պետք է հետևել և այնպիսի հիմնական արժեքներ, որոնք պետք է օգտագործվեն այնպես, որ անդամ պետությունները համարժեքորեն կարողանան կիրառել նվազագույն պահանջները,

8) օպտիկական ճառագայթահարման մակարդակը կարելի է առավել արդյունավետորեն նվազեցնել աշխատատեղերի նախագծերում կանխարգելիչ միջոցներ ներառելով և ընտրելով այնպիսի աշխատանքային սարքավորումներ, ընթացակարգեր ու մեթոդներ, որոնց միջոցով նախապատվություն է տրվում սկզբնաղբյուրում վտանգների նվազեցմանը: Աշխատանքային սարքավորումներին և մեթոդներին վերաբերող դրույթները, այդպիսով, նպաստում են ներգրավված աշխատողների պաշտպանությանը: «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցառումների ներմուծման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 6(2) հոդվածով (8) սահմանված ընդհանուր կանխարգելիչ սկզբունքների համաձայն՝ խմբակային պաշտպանիչ միջոցները գերակայում են անհատական պաշտպանիչ միջոցների նկատմամբ,

9) գործատուները պետք է փոփոխություններ կատարեն տեխնիկական առաջընթացին և գիտությանը համապատասխան՝ կապված օպտիկական ճառագայթահարման վտանգների հետ՝ նպատակ ունենալով բարելավելու աշխատողների առողջության պահպանությունը և անվտանգության ապահովումը,

10) քանի որ սույն Հրահանգը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով առանձին հրահանգ է, այդ հրահանգը վերաբերում է աշխատողների վրա օպտիկական ճառագայթման ազդեցությանը՝ չհակասելով սույն Հրահանգում ներառված առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

11) քանի որ սույն Հրահանգով ներքին շուկայի սոցիալական ուղղվածության ձևավորմանը միտված գործնական քայլ է կատարվում,

12) այնպիսի համալիր մոտեցում, որը խթանում է առավել արդյունավետ կարգավորման սկզբունքը և ապահովում է պաշտպանության բարձր մակարդակ, կարելի է ձեռք բերել, եթե արտադրողների կողմից օպտիկական ճառագայթման աղբյուրներից պատրաստված արտադրանքը և հարակից սարքավորումները համապատասխանում են այն ներդաշնակեցված ստանդարտներին, որոնք այդպիսի արտադրանքին ներհատուկ վնասներից՝ դրանք օգտագործողների առողջությունը պաշտպանելու ու անվտանգությունը ապահովելու համար են նախատեսված. համապատասխանաբար, գործատուները կարող են չկրկնել արտադրողի կողմից կատարված չափումները կամ հաշվարկները՝ կապված այդպիսի սարքավորումների անվտանգության հիմնական պահանջների հետ համապատասխանությունը որոշելու հետ, ինչպես սահմանված է Համայնքի գործող հրահանգներով՝ պայմանով, որ այդ սարքավորումները համապատասխանորեն ու կանոնավոր կերպով են պահպանվել ,

13) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը [9] համապատասխան,

14) ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաների պահպանումը պետք է ապահովի պաշտպանության բարձր մակարդակ՝ առողջությանը հասցվող ազդեցությունների առումով, որոնք կարող են առաջանալ օպտիկական ճառագայթահարման հետևանքով,

15) Հանձնաժողովը պետք է մշակի գործնական ուղեցույց՝ որպես օգնություն գործատուներին, մասնավորապես, ՓՄՁ-ների ղեկավարներին՝ սույն Հրահանգի տեխնիկական դրույթներն ավելի լավ հասկանալու նպատակով: Հանձնաժողովը պետք է ձգտի հնարավորինս արագորեն ավարտելու այդ ուղեցույցը՝ անդամ պետությունների

կողմից սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցների ընդունումը
ոչուրացնելու համար,

16) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ
համաձայնագրի 34-րդ պարբերությանը համապատասխան [10]' անդամ պետություններին
պետք է խրախուսել, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմել սույն Հրահանգի և
փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ ու հրապարակել դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակը և գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգով, որը 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով 19-րդ առանձին
հրահանգ է, սահմանվում են աշխատավայրում արհեստական օպտիկական ճառագայթման
ենթարկվելու հետևանքով առաջացող կամ հավանաբար առաջացող՝ առողջությանն ու
անվտանգությանը սպառնացող վտանգներից աշխատողներին պաշտպանելու նվազագույն
պահանջները:

2. Սույն Հրահանգը վերաբերում է աշխատողների առողջությանն ու անվտանգությանը
սպառնացող վտանգին, որն առաջանում է արհեստական օպտիկական ճառագայթման
ենթարկվելու պատճառով աչքերի ու մաշկի վրա բացասական հետևանքների պատճառով:

3. 89/391/ԵՏՀ հրահանգն ամբողջությամբ կիրառվում է 1-ին պարբերության մեջ նշված
ամբողջ տարածքում՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ
դրույթներին:

Հողված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

ա) օպտիկական ճառագայթում՝ ցանկացած էլեկտրամագնիսական ճառագայթում՝ 100 նմ–ից մինչև 1 մմ ալիքի երկարության դիապազոնում:

Օպտիկական ճառագայթման սպեկտրը բաժանվում է ուլտրամանուշակագույն ճառագայթման, ճառագայթման տեսանելի դիապազոնի ու ինֆրակարմիր ճառագայթման՝

i) ուլտրամանուշակագույն ճառագայթում՝ օպտիկական ճառագայթում 100 նմ–ից մինչև 400 նմ ալիքի երկարության դիապազոնում: Ուլտրամանուշակագույն սպեկտրի տիրույթը բաժանվում է UVA (315-400 նմ), UVB (280-315 նմ) և UVC (100-280 նմ) ճառագայթների:

ii) ճառագայթման տեսանելի դիապազոն՝ օպտիկական ճառագայթում 380 նմ–ից մինչև 780 նմ ալիքի երկարության դիապազոնում:

iii) ինֆրակարմիր ճառագայթում՝ օպտիկական ճառագայթում 780 նմ–ից մինչև 1 մմ ալիքի երկարության դիապազոնում:

Ինֆրակարմիր սպեկտրի տիրույթը բաժանված է IRA (780-1400 նմ), IRB (1400-3000 նմ) և IRC (3000 նմ-1 մմ) ճառագայթների:

բ) լազեր (լույսի ուժեղացում ստիպողական (խթանված) ճառագայթման միջոցով)՝ ցանկացած սարք, որով հիմնականում հսկվող ստիպողական (խթանված) ճառագայթման հիման վրա կարելի է առաջացնել կամ ուժեղացնել օպտիկական ճառագայթման ալիքի երկարության դիապազոնի էլեկտրամագնիսական ճառագայթումը:

գ) լազերային ճառագայթում՝ օպտիկական ճառագայթում լազերի միջոցով:

դ) անկոհերենտ ճառագայթում՝ լազերային ճառագայթումից բացի, ցանկացած այլ օպտիկական ճառագայթում:

ե) ճառագայթափարման թույլատրելի սահմանային նորմաներ՝ օպտիկական ճառագայթման ենթարկվելու սահմանային նորմաներ, որոնց համար ուղղակիորեն հիմք են ընդունվում առողջության վրա հայտնի ներգործությունները և կենսաբանական հանգամանքները: Այդ սահմանային նորմաների պահպանման միջոցով կապահովվի, որ օպտիկական ճառագայթման արհեստական աղբյուրներից ճառագայթափարման ենթարկվող

աշխատողները պաշտպանված լինեն առողջության վրա դրանց բոլոր հայտնի բացասական հետևանքներից.

զ) ճառագայթահարում (E) կամ տեսակարար հզորություն՝ միավոր մակերեսի համար բնորոշ ճառագայթման հզորությունը՝ արտահայտված քառակուսի մետր/վատտով (W m-2).

է) էներգետիկ էքսպոզիցիա (H)՝ ճառագայթահարման ժամանակի ինտեգրալը՝ արտահայտված քառակուսի մետր/ջրուլով (J m-2).

ը) էներգետիկ պայծառություն (L)՝ միավոր մակերեսի համար միավոր մարմնային անկյունի համար ճառագայթման հոսքը կամ էլքային հզորությունը՝ մեկ ստեռադիանի համար արտահայտված քառակուսի մետր/վատտով (W m—2 sr-1).

թ) մակարդակ՝ ճառագայթահարման, էներգետիկ էքսպոզիցիայի և էներգետիկ պայծառության համակցությունը, որին ենթարկվում է աշխատողը:

Հոդված 3

Ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաները

1. Օպտիկական ճառագայթման բնական աղբյուրներից արձակվող ճառագայթումից բացի՝ անկոհերենտ ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաները սահմանված են I հավելվածով:

2. Լազերային ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաները սահմանված են II հավելվածով:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

Ճառագայթահարման որոշումը և վտանգների գնահատումը

1. 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) և 9(1) հոդվածներով սահմանված պարտավորություններն իրականացնելիս գործատուն, օպտիկական ճառագայթման արհեստական աղբյուրներից

ճառագայթահարման ենթարկվող աշխատողների դեպքում, գնահատում, իսկ, անհրաժեշտության դեպքում, չափում և (կամ) հաշվարկում է օպտիկական ճառագայթահարման այն մակարդակները, որոնց կարող են ենթարկվել աշխատողները: Դրա նպատակն է սահմանել ու գործողության մեջ դնել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ճառագայթահարման մակարդակը կիրառելի սահմանային նորմաներին համապատասխանեցնելու համար: Գնահատման, չափման և (կամ) հաշվարկների իրականացման ժամանակ կիրառվող մեթոդաբանությունը լազերային ճառագայթման մասով պետք է համապատասխանի միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (ՄԷՀ) սահմանած ստանդարտներին, իսկ անկոհերենտ ճառագայթման մասով՝ Լուսավորության հարցերով միջազգային հանձնաժողովի (ԼՄՀ) և Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵԿ) առաջարկներին: Նշված ստանդարտներով ու առաջարկներով չկարգավորվող ճառագայթահարման իրավիճակներում և մինչև համապատասխան ԵՄ ստանդարտների կամ առաջարկների սահմանումը՝ գնահատումը, չափումը և (կամ) հաշվարկներն իրականացվում են գոյություն ունեցող ազգային կամ միջազգային գիտական ուղեցույցների կիրառմամբ: Ճառագայթահարման երկու իրավիճակում էլ գնահատման համար հիմք են ընդունվում սարքավորումն արտադրողների կողմից տրամադրված տեղեկությունները, եթե դա կարգավորվում է Համայնքի համապատասխան հրահանգներով:

2. 1-ին պարբերության մեջ նշված գնահատումը, չափումը և (կամ) հաշվարկները պլանավորվում ու իրականացվում են իրավասու մարմինների կամ անձանց կողմից համապատասխան ընդմիջումներով՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով 89/391/ԵՏՀ հրահանգի 7-րդ և 11-րդ հոդվածների դրույթներին, որոնք վերաբերում են անհրաժեշտ իրավասու մարմիններին կամ անձանց և աշխատողների հետ խորհրդակցությանն ու նրանց մասնակցությանը: 1-ին պարբերությունում նշված ճառագայթահարման մակարդակի գնահատման, այդ թվում՝ դրա չափման և (կամ) հաշվարկի արդյունքում ստացված տվյալները, պետք է պահպանվեն այնպիսի եղանակով, որպեսզի հետագայում ևս հնարավոր լինի օգտվել դրանցից:

3. Համաձայն 89/391/ԵՏՀ հրահանգի 6(3) հոդվածի՝ վտանգի գնահատում կատարելիս գործատուն հատուկ ուշադրություն պետք է դարձնի հետևյալ հանգամանքներին.

ա) օպտիկական ճառագայթման արհեստական աղբյուրներից ճառագայթահարման մակարդակ, ալիքի երկարության միջակայք և տևողություն.

բ) սույն Հրահանգի 3-րդ հոդվածում նշված ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաներ.

գ) ցանկացած ազդեցություն, որ առնչվում է բարձր ռիսկային խմբերի պատկանող աշխատողների առողջությանը և անվտանգությանը.

դ) աշխատավայրում օպտիկական ճառագայթման և լուսազգայունացնող քիմիական նյութերի միջև փոխազդեցությունների հետևանքով աշխատողների առողջության ու անվտանգության վրա գործադրվող ցանկացած հնարավոր ազդեցություն.

ե) ցանկացած անուղղակի ազդեցություն, ինչպես, օրինակ՝ ժամանակավոր կուրացում, պայթյուն կամ հրդեհ.

զ) փոխարինող այնպիսի սարքավորումների առկայություն, որոնք նախատեսված են նվազեցնելու արհեստական աղբյուրներից օպտիկական ճառագայթահարման մակարդակը.

է) բժշկական հսկողության արդյունքում ստացված համապատասխան տեղեկություններ, իսկ հնարավորության դեպքում՝ նաև գրավոր տեղեկություններ.

ը) արհեստական օպտիկական ճառագայթման ենթարկվելու բազմաթիվ աղբյուրներ.

թ) ՄԷՀ-ի համապատասխան ստանդարտի համաձայն սահմանված՝ լազերի նկատմամբ կիրառվող դասակարգում, իսկ արհեստական ցանկացած աղբյուրի մասով, որը կարող է պատճառել 3B կամ 4-րդ դասի լազերին համարժեք վնաս՝ ցանկացած համանման դասակարգում.

ժ) Համայնքի համապատասխան հրահանգներին համապատասխան օպտիկական ճառագայթման աղբյուրների և դրանց հետ կապված աշխատանքային սարքավորումների արտադրողների կողմից տրամադրված տեղեկություններ:

4. Գործատուն պետք է տնօրինի վտանգի գնահատումը 89/391/ԵՏՀ հրահանգի 9(1)(ա) հոդվածի համաձայն և պետք է որոշի, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն՝ սույն Հրահանգի 5-րդ և 6-րդ հոդվածներին համապատասխան: Ռիսկերի գնահատման արդյունքները գրանցվում են համապատասխան կրիչի վրա՝ ազգային իրավունքի և գործելակերպի համաձայն, այն կարող է ներառել գործատուի այն հիմնավորումը, որ օպտիկական ճառագայթման հետ կապված վտանգների բնույթն ու մակարդակն այնպիսին են, որ հետագայում վտանգների մանրամասն գնահատում իրականացնելու անհրաժեշտություն չկա: Վտանգների գնահատումը կանոնավորապես թարմացվում է

հատկապես այն դեպքում, երբ տեղի են ունեցել այնպիսի էական փոփոխություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել դրա արդիականությունը, կամ, երբ դա անհրաժեշտ է՝ հաշվի առնելով բժշկական հսկողության արդյունքները:

Հոդված 5

Վտանգները նվազեցնելու կամ դրանցից խուսափելու վերաբերյալ դրույթները

1. Հաշվի առնելով տեխնիկական առաջընթացը և վտանգի նկատմամբ հսկողություն իրականացնելու միջոցների առկայությունը՝ օպտիկական արհեստական ճառագայթահարման հետ կապված վտանգները պետք է վերացվեն կամ հասցվեն նվազագույնի:

Օպտիկական արհեստական ճառագայթահարումից առաջացող վտանգների նվազեցումը պետք է իրականացվի 89/391/ԵՏՀ հրահանգով սահմանված՝ կանխարգելման ընդհանուր սկզբունքների հիման վրա:

2. Եթե օպտիկական ճառագայթման արհեստական աղբյուրներից ճառագայթահարման ենթարկվող աշխատողների հետ կապված՝ 4(1) հոդվածին համապատասխան իրականացված վտանգների գնահատմամբ ցույց է տրվում, որ ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաների գերազանցման հավանականություն կա, ապա գործատուն պետք է մշակի ու իրականացնի գործողությունների այնպիսի ծրագիր, որը կներառի թույլատրելի սահմանային նորմաները գերազանցող ճառագայթահարման կանխարգելմանն ուղղված տեխնիկական և (կամ) կազմակերպչական միջոցներ՝ մասնավորապես, հաշվի առնելով հետևյալը՝

ա) աշխատանքի այլ մեթոդներ, որոնց շնորհիվ կրճատվում է օպտիկական ճառագայթահարման վտանգը.

բ) ավելի քիչ օպտիկական ճառագայթում արձակող սարքավորումների ընտրություն՝ հաշվի առնելով կատարվելիք աշխատանքը.

գ) օպտիկական ճառագայթման արձակումը նվազեցնող տեխնիկական միջոցներ, անհրաժեշտության դեպքում, բլոկավորող փականներ, էկրանավորում կամ առողջապահական նմանատիպ մեխանիզմներ.

դ) աշխատանքային սարքավորումների, աշխատավայրերի և աշխատատեղերում գործածվող համակարգերի պահպանման համապատասխան ծրագրեր.

ե) աշխատավայրերի և աշխատատեղերի կառուցվածքն ու հատակագիծը.

զ) ճառագայթահարման տևողության և մակարդակի սահմանափակումը.

է) համապատասխան անձնական պաշտպանական միջոցների առկայություն.

ը) սարքավորումն արտադրողի ցուցումները, եթե դա կարգավորվում է Համայնքի համապատասխան հրահանգներով:

3. 4-րդ հոդվածին համապատասխան իրականացված վտանգների գնահատման հիման վրա՝ այն աշխատավայրերը, որտեղ աշխատողները կարող են օպտիկական ճառագայթման ենթարկվել ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաները գերազանցող արհեստական աղբյուրներից, պետք է նշվեն համապատասխան ցուցանակներով՝ «Աշխատավայրում անվտանգության և առողջության վերաբերյալ ցուցանակների տեղադրման նվազագույն պահանջների մասին» Խորհրդի 1992 թվականի հունիսի 24-ի 92/58/ԵՏՀ հրահանգին (9-րդ անհատական հրահանգ՝ 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով) համապատասխան: Այդպիսի տարածքները պետք է սահմանվեն, և մուտքն այդ տարածքներ պետք է սահմանափակվի, եթե դա տեխնիկապես հնարավոր է, և առկա է ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաների գերազանցման վտանգ:

4. Աշխատողների ճառագայթահարման մակարդակը չպետք է գերազանցի ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաները: Ամեն դեպքում, եթե ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաները խախտվում են՝ չնայած օպտիկական ճառագայթման արհեստական աղբյուրների առնչությամբ սույն Հրահանգին համապատասխան ձեռնարկված միջոցառումներին, ապա գործատուն անհապաղ գործողություններ է ձեռնարկում՝ ճառագայթահարման մակարդակը թույլատրելի սահմանային նորմաներից ցածր պահելու համար: Գործատուն բացահայտում է ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաների գերազանցման պատճառները և փոփոխություններ է կատարում պաշտպանական ու կանխարգելիչ միջոցառումներում՝ թույլատրելի սահմանային նորմաների կրկին անգամ գերազանցումը կանխելու նպատակով:

5. Համաձայն 89/391/ԵՏՀ հրահանգի 15-րդ հոդվածի՝ գործատուն պետք է համապատասխանեցնի սույն հոդվածում նշված միջոցառումները հատուկ ռիսկային խմբերի պատկանող աշխատողների պահանջներին:

Հոդված 6

Աշխատողներին տեղեկություններ տրամադրելը և նրանց վերապատրաստումը

Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ և 12-րդ հոդվածներին՝ գործատուն պետք է ապահովի, որ աշխատավայրում արհեստական ճառագայթման հետևանքով առաջացող վտանգներին ենթարկվող աշխատողներին և (կամ) նրանց ներկայացուցիչներին տրամադրվի ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն, և որ անցկացվեն ուսուցողական դասընթացներ՝ սույն Հրահանգի 4-րդ հոդվածով սահմանված վտանգների գնահատման արդյունքների և, մասնավորապես, հետևյալի վերաբերյալ՝

ա) սույն Հրահանգի կիրարկման համար ձեռնարկված միջոցները.

բ) ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաները և դրանց առնչվող հնարավոր վտանգները.

գ) սույն Հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն կատարված՝ օպտիկական արհեստական ճառագայթահարման մակարդակների գնահատման, չափման արդյունքները և (կամ) հաշվարկները՝ դրանց նշանակության ու հնարավոր վտանգների մասին բացատրություններ.

դ) ինչպես բացահայտել ճառագայթահարման հետևանքով առողջության վրա գործած բացասական ազդեցությունները և ինչպես տեղեկացնել դրանց մասին.

ե) այն հանգամանքները, որոնց դեպքում աշխատողներն անցնում են բժշկական հսկողություն.

զ) ճառագայթումից առաջացող վտանգների նվազեցմանը նպաստող անվտանգ աշխատանքային գործելակերպեր.

է) համապատասխան անձնական պաշտպանական միջոցների պատշաճ գործածություն:

Հոդված 7

Աշխատողների հետ խորհրդակցությունը և նրանց մասնակցությունը

Սույն Հրահանգով կարգավորվող հարցերի շուրջ աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությունն իրականացվում և նրանց մասնակցությունն ապահովվում է 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածին համապատասխան:

ԲԱԺԻՆ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 8

Բժշկական հսկողությունը

1. Օպտիկական ճառագայթման ենթարկվելու պատճառով առաջացող՝ առողջության համար ցանկացած բացասական հետևանք կանխարգելելու և ժամանակին բացահայտելու, ինչպես նաև երկարատև ժամկետով առողջությանը սպառնացող բոլոր վտանգներն ու քրոնիկ հիվանդությունների առաջացման ցանկացած վտանգ կանխարգելելու նպատակով՝ անդամ պետություններն ընդունում են աշխատողների համար համապատասխան բժշկական հսկողություն ապահովելու վերաբերյալ իրավական ակտեր՝ համաձայն 89/391/ԵՏՀ հրահանգի 14-րդ հոդվածի:
2. Անդամ պետություններն ապահովում են բժշկական հսկողության իրականացումը բժշկի, մասնագիտական հիվանդությունների հարցերով զբաղվող մասնագետի կամ առողջական վիճակի հսկողության համար պատասխանատու բժշկական հաստատության կողմից՝ ազգային իրավունքին և գործելակերպին համապատասխան:
3. Անդամ պետությունները միջոցներ են նախատեսում և ապահովում, որ 1-ին պարբերությանը համապատասխան բժշկական հսկողության ենթարկվող յուրաքանչյուր աշխատողի համար բացվեն անհատական բժշկական քարտեր, որոնք նաև պետք է մշտապես թարմացվեն: Բժշկական քարտերում լրացվում են իրականացված բժշկական հսկողության արդյունքների մասին ամփոփ տեղեկությունները: Դրանք պետք է պահվեն համապատասխան ձևով, որպեսզի հետագայում ևս հնարավոր է լինի օգտվել դրանցից՝ հաշվի առնելով գաղտնիությունը: Համապատասխան գրառումների օրինակները

տրամադրվում են իրավասու մարմնին՝ վերջինիս պահանջի հիման վրա՝ հաշվի առնելով գաղտնիությունը: Գործատուն համապատասխան միջոցներ է ձեռնարկում և ապահովում, որ բժիշկը, մասնագիտական հիվանդությունների հարցերով զբաղվող մասնագետը կամ բժշկական հսկողության համար պատասխանատու բժշկական հաստատությունը, ինչպես համապատասխան դեպքերում սահմանված է անդամ պետությունների կողմից, 4-րդ հոդվածում նշված վտանգի գնահատման արդյունքներից օգտվելու հնարավորություն ունենան, եթե այդ արդյունքները բժշկական հսկողություն իրականացնելու համար կարող են անհրաժեշտ լինել: Պահանջի հիման վրա՝ առանձին աշխատողների համար ապահովվում է իրենց անհատական բժշկական փաստաթղթերի մատչելիությունը:

4. Ամեն դեպքում, երբ բացահայտվում է թույլատրելի սահմանային նորմաների գերազանցմամբ ճառագայթահարման որևէ դեպք, համապատասխան աշխատողը (աշխատողները) ենթարկվում է (ենթարկվում են) բժշկական հետազոտության՝ ազգային իրավունքին և գործելակերպին համապատասխան: Այդպիսի բժշկական հետազոտություն իրականացվում է նաև, եթե բժշկական հսկողության արդյունքների համաձայն որևէ աշխատողի մոտ ախտորոշվել է հիվանդություն կամ հայտնաբերվել է առողջության համար որևէ բացասական հետևանք, որի պատճառը, բժշկի կամ մասնագիտական հիվանդությունների հարցերով զբաղվող մասնագետի կարծիքով, աշխատավայրում արհեստական աղբյուրներից օպտիկական ճառագայթման ենթարկվելն է: Երկու դեպքում էլ, երբ խախտվում են թույլատրելի սահմանային նորմաները, կամ բացահայտվում են առողջության համար բացասական հետևանքներ (այդ թվում՝ հիվանդություններ)՝

ա) բժիշկը կամ համապատասխան որակավորում ունեցող որևէ այլ անձ տեղեկացնում է աշխատողին անձամբ իրեն վերաբերող արդյունքների մասին: Նա, մասնավորապես, պետք է տեղեկություններ և խորհուրդ ստանա, թե ինչ բուժում պետք է անցնի ճառագայթահարման ավարտից հետո.

բ) գործատուին պետք է տեղեկացնել բժշկական հսկողության էական արդյունքների մասին՝ հաշվի առնելով բժշկական գաղտնապահությունը:

գ) գործատուն պետք է՝

– ուսումնասիրի 4-րդ հոդվածի համաձայն կատարված վտանգների գնահատումը,

– ուսումնասիրի 5-րդ հոդվածով նախատեսված միջոցառումները՝ ուղղված վտանգների վերացմանը կամ նվազեցմանը,

- 5-րդ հոդվածով նախատեսված վտանգների վերացմանը կամ նվազեցմանն ուղղված միջոցառումների կիրառման ժամանակ հաշվի առնի մասնագիտական հիվանդություններով զբաղվող բժշկի կամ այլ՝ համապատասխան որակավորում ունեցող անձի կամ իրավասու մարմնի կողմից ներկայացված առաջարկությունները, և

- կազմակերպի առողջության մշտական հսկողություն և ապահովի նմանատիպ վտանգի ենթարկված ցանկացած աշխատողի առողջական վիճակի ուսումնասիրություն: Նման դեպքերում, իրավասու բժիշկը կամ մասնագիտական հիվանդությունների հարցով զբաղվող աշխատողը կամ իրավասու մարմինը կարող է առաջարկել ճառագայթահարման ենթարկված անձանց անցնել բժշկական զննություն:

Հոդված 9

Պատժամիջոցները

Անդամ պետությունները նախատեսում են համարժեք պատժամիջոցներ, որոնք կկիրառվեն սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային իրավական ակտերի խախտման դեպքում: Այդ պատժամիջոցները կիրառվում են արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ կերպով:

Հոդված 10

Տեխնիկական փոփոխությունները

1. Հավելվածներում նշված՝ ճառագայթահարման թույլատրելի սահմանային նորմաներում կատարվող ցանկացած փոփոխություն ընդունվում է Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի կողմից՝ Պայմանագրի 137(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

2. Հավելվածներում խիստ տեխնիկական բնույթի փոփոխությունները՝ կապված՝

ա) տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման ոլորտում աշխատանքային սարքավորումների և (կամ) աշխատավայրերի նախագծի, կառուցման, արտադրության կամ շինարարության վերաբերյալ հրահանգների ընդունման հետ.

բ) տեխնիկական առաջընթացի, ներդաշնակեցված եվրոպական ամենաէական ստանդարտներում կամ տեխնիկական պայմաններում կատարվող փոփոխությունների, ինչպես նաև աշխատավայրում օպտիկական ճառագայթահարման վերաբերյալ գիտական նոր ձեռքբերումների հետ.

ընդունվում են 11(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 11

Կոմիտեն

1. Հանձնաժողովին պետք է աջակցի 89/391/ԵՏՀ հրահանգի 17-րդ հոդվածում նշված Կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը երեք ամիս է:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

ԲԱԺԻՆ IV

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 12

Հաշվետվությունները

Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ նշելով սոցիալական գործընկերների տեսակետները:

Յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ, Տնտեսական ու սոցիալական հարցերով եվրոպական կոմիտե և Աշխատավայրում անվտանգության ու առողջության հարցերով խորհրդատվական կոմիտե է ներկայացնում տեղեկություններ այդ հաշվետվությունների բովանդակության, դրանց մասին

իրենց գնահատականների, տվյալ ոլորտում արձանագրված զարգացումների և ցանկացած գործողության մասին, որ կարող է երաշխավորվել գիտության վերջին նվաճումների ներքո:

Հոդված 13

Գործնական ուղեցույցը

Սույն Հրահանգի կիրարկումը դյուրացնելու համար Հանձնաժողովը 4-րդ և 5-րդ հոդվածների և I ու II հավելվածների դրույթների մասին գործնական ուղեցույց է մշակում:

Հոդված 14

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը մինչև 2010 թվականի ապրիլի 27-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են կամ արդեն ընդունել են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 15

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակման օրը:

Հոդված 16

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում 2006 թվականի ապրիլի 5-ին: